

էնին իմ գլոխ», ասաց ու ձին ասպանդակեց, քշեց. (մոռացած էր զէնք առնելու) բռունցքը բարձրացուցած առաջ կը քշէր ու կատէր որդւոցը—«իդա գոմբով ընդոնց . . . » խօսքը զեռ բերանն էր, Ակոյի մեծ տղան իւր ձին կասպանդակէ, դանակով իւր հօրը ձիու փորքաշն կը կտրէ և հօրը ձեռքէն բռնածին պէս՝ ձին ներքեւէն կը գնայ:

—Աբոյ, դու գնայ տանը իշկայ, քու ինչ լախան ա, մենք կը մեռնինք . . . » կասէ ու կը քշէ, կը հասնեն քրդերուն:

Երկու կողմէն գնդակաձգութիւնը սկսած էր, մին միւսին վերայ չէր համարձակէիր յարձակում դործելու, քանի մարդ երկու կողմէն ևս վիրաւորուած էին . . . :

Յանկարծ տեսնես Յակոյի խմբի միջէն շուքի պէս մի բան «ձեր կերած հացը հարամ եղնի» ասելով սլացաւ, անցաւ:

Պա Յակոն էր, թամբը ձգած, արագութեամբ նրժոյգի վերան ոտներն պինդ սեղմած, բռունցքը քրդերուն ցոյց տալով վրաններու մէջ մտաւ ու սկսաւ բռունցքով այս ու այն կողմ հարուածներ տալ:

Յակոյի մեծ տղան քշեց որ հայրը ետ դարձնէր, գնդակի հարուած մի առաւ լեղուին ու առամներուն, անմիջապէս ձիուց ընկաւ:

Մնացած երեսուն ու ինը ձիաւորներն Յակոյի հաւարին քշեցին, «հողը եղնի մեր զլխին, պապէն էրթայ, ըպա մենք մնանք» ասելով մտան վրաններու մէջ:

Քրդեր անսնելով որ կոտորածը սաստիկ պիտի լինի, բերին Ալիկ յանձնեցին Յակոյին:

Յակոն տարաւ Ալիկը մեծ աղուն մօտ, քաշեց